հաշիւ տայ։ 750 մարկից աւելի ստացող բանւորների համար հիմնարկութիւնը ստանում է կէսը բանւորից և կէսը գործարանատէրից։ Նրբ մի տարաբաղդութիւն է պատահում գործարանատէրը պէտք է երեք օրվայ ընթացքում յայտնէ տեղական պոլիցիային։ Իսկոյն քննութիւն է լինում և վնասված բանւորին վարձատրութիւն է տրվում։ Եթէ բանւորի անդամներից մէկը վնասվել է, հիմնարկութիւնը հոգում է բոլոր ծախսերը նրան բժշկելու համար և յայտնի վարձատրութիւն է տալիս մինչև առողջանալը։ Եթէ բանւորը դժբաղդ դէպքից իսկոյն մեռնում է, նրա ընտանիքը ստանում է բանւորի տարեկան եկամուտի 10% թաղման համար և յայտնի վարձատրութիւն։ Եթէ բանւորը մեռնում է երկամիւանդութիւնից յետոյ, հիմնարկութիւնը անում է բոլոր ծախսերը նրան բժշկելու համար, իսկ մեռնելուց յետոյ նրա ընտանիքին տալիս է նախկին ռոճկի $16^2/_3$%։ Եթէ բանւորը առողջանում է, բայց անկարող է շարունակել իր աշխատանքը, նրա վարձատրութիւնը մի անգամից տրվում է և այնուհետև բանւորը ոչինչ հաշիւ չի ունենայ հիմնարկութեան հետ։ Բանւորը, եթէ անբաւական լինի ապահովական ընկերութեան վճռից, կարող է դանդատվել դատարանին և հիմնարկութեան գործավարութիւնը ազատ կը լինի ամեն տեսակ հարկերից։

Այս նախագիծը բոլորովին նոր է և մինչև այժմ չէ պատահած ոչ մի պետութեան օրէնսդրութեան մէջ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Փարիզից լրագիրներին հեռագրում են. պարլամենտական շրջանների մէջ խօսում են, որ «Դեղին գիրքը» կը հրատարակվի յունվարի 27-ին, իսկ պատգամաւորների ժողովը յունական հարցը կը քննէ փետրվարի 3-ին։ Նոյն շրջանների մէջ հաւատացնում են, որ Թիւրքիան մտադիր է զիջել Ցունաստանին Լարիսա, բայց Եանինա և Մետցովօ կը պահի, որովհետև նրանք լեռնային գծի վրա են և բնական սահման են կազմում Թիւրքիայի և Ցունաստանի մէջ։

—Վիէննայի կառավարչական շրջանները հաւատացնում են, որ պետութիւնները նոր բանակցութիւններ կը սկսեն Բ. Դրան հետ յունական խնդրի առիթով, բայց այդ բանակցութիւնները կոնֆերենցիայի ձև չեն ունենայ։

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Այս օրերս մեծ հանդիսով կատարվեցաւ Լօնդոնի սինագոգայում Լէօպոլդ Բոդշիլդի պսակը օրիորդ Մարիա Պէրուջիի հետ Տրիէստից։ Հանդիսին ներկայ էին՝ Ուէլսի իշխանը, Բիկոնսֆիլդ և Լօնդոնի բարձր հասարակութեանը պատկանող շատ տիկիններ և պարոններ։ Պսակի հանդիսից յետոյ, որ կատարվեցաւ համեմատ հրէական ծէսերին, հանդիսականները հրաւիրվեցան փառաւոր նախաճաշիկի։ Իշխան Ուէլսի առաջարկեց նորապսակների կենացը, իսկ լորդ Բիկոնսֆիլդ իշխան Ուէլսի կենացը։

* * *

Նորերումս հրատարակվել է Էբերսի մի նոր բոման «Կայսր» վերնագրով։ Էբերս, Լայպցիգի համալսարանի եգիպտոլոգ պրոֆեսոր է և յայտնի է իր գեղեցիկ գրված եգիպտական կեանքից վերցրած պատմական վէպերով։ Նա մի քանի տարի անց է կացրել Էգիպտոսում, այդ երկրի հնութիւնները ուսումնասիրելու նպատակով։ Բացի վերև յիշված բոմանից, նա ունի էլի մի քանի գրուածներ, որոնցից գրականութեան մէջ յայտնի տեղ են բռնում «Եգիպտոսի թագաւորի աղջիկ» և «Բոյրեր» վերնագրով վէպերը։ Պատմութեան փաստերի ճշտութեան հետ նա միացնում է գեղարուեստական, հարուստ, կենդանի լեզու և վառվռուն երևակայութիւն, որով նա կարողանում է գեղեցիկ կերպով կենդանացնել ընթերցողի առջև մի օտար երկիր ու ժողովուրդ անցեալ դարերի իր բարք ու վարքի մէջ։ Ոչ մի պատմութիւն չէ կարող տալ այն հարուստ տեղեկութիւնները, որ Էբերս տալիս է իր բոմանների մէջ։ Նա յայտնի է և իր ուրիշ գիտնական, պատմական գրուածներով և դեռ երիտասարդ լինելով յոյս է տալիս մեզ որ նրա «Կայսր» բոմանը վերջինը չէ լինելու։ Բոլոր նրա գրուածները թարգմանված են այժմ ամեն եւրոպական լեզուներով։

* * *

Այժմ Ֆրանսիայում հրատարակվում են 1880 լրագիրներ և ամսագիրներ, այդպիսով 20,000 կարդացողի վրա ընկնում է մի լրագիր, կամ ամսագիր։ Շվէյցարիայում 1,700 կարդացողի վրա մի թերթ։ Փարիզում հրատարակվում են 463 լրագիրներ և ամսագիրներ, որոնցից 70 կազմում են օրաթերթերը։ Փարիզի «Ֆիգարո» թերթը հրատարակելով այս ստատիստիքական տեղեկութիւնները, նկատում է հեգնական ձևով. «Զարմանալի բան. այս ահագին քանակութեամբ տպված թերթերը կարդացվում են և դարձեալ գժերի թիւը այնպէս զգալի կերպով չէ աւելանում։ Այս հետևանքը մեզ պարզ ցոյց է տալիս մարդկութեան ուղեղի զօրութիւնը»։

* * *

Այժմ Ադելինա Պատտին իր ամուսնու՝ պ. Նիկոլինիի հետ հիւր է Մադրիդի մէջ։ Թատրոնի դիրեկտորը հրաւիրելով դրանց բարեկենդանի ներկայացումների համար, պայման կապելու ժամանակ հետևեալ խօսակցութիւն է ունեցել հռչակաւոր երգչուհու հետ.—«Ի՞նչքան վարձ կը պահանջէք իւրաքանչիւր երեկոյի համար ձեր ամուսնու հետ միասին»։—Յաս հազար ֆրանկ, յարգելի պարոն, եղաւ պատասխան։—«Իսկ ինչքան կը պահանջէք եթէ դուք մէնակ երգէք, առանց ձեր ամուսնու»։—«Դարձեալ տաս հազար ֆրանկ» պատասխանեց Պատտին։

* * *

Բերլինի վերջին ժողովրդագրութիւնից երևում է որ այժմ 1,120,000 Բերլինի բնակիչների վրա 60,000 հրէայ է գալիս։

* * *

Փարիզի բոնապարտեան «Peuple Français» լրագրի խօսքերին նայելով ֆրանսիական նախկին կայսրուհին մշտապէս այժմ բնակվելով իր նոր Ֆօրնբօրօ-Գիլ կալուածքում, հրատարակում է իր սեփական ձեռքով գրած մի գիրք «Թագաժառանգի կեանքի և մահվան պատմութիւնը» վերնագրով, մինչև այժմ չը հրատարակված դոկումենտների հիման վրա։ Այդ գրքի տպագրութիւնից վերջը նա կը հրատարակի «Les notes de Napoleon III» վերնագրով մի հաւաքածու։ Նապոլէօնը իր ամբողջ թագաւորութեան ժամանակ սովորութիւն է ունեցել ամեն անցքերի մասին նկատողութիւններ գրել և երբ, սեպտեմբերի 4-ին հարկադրվեցաւ Տիւլերեան պալատից փախչել, կարողացել են և այդ թղթերը փրկել։ Ասում են, թէ այդ հաւաքածուի մէջ շատ տեղեկութիւններ կան, որոնք այժմեան հանրապետութեան մէջ գործող յայտնի անձինքների վատ կողմերն են մերկացնում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 21 յունվարի։ Համայնքների ժողովի սպիկերը (նախագահը) յայտնեց, որ այսօր նա չէ կարող թոյլ տալ վիճաբանութիւնների շարունակելը։ Այդ յայտնութիւնը մեծ վրդովմունք գործեց։ Այնու հետև ժողովը ընդունեց Ֆօրստերի առաջարկութեան քննութիւնը և իսկոյն սկսեց առաջին ընթերցանութիւնը։ Հօմրուլերներից և ավտոնոմիստներից շատերը թողին ժողովի դահլիճը։ Գլադստոն ասաց, որ էգուց կը յայտնէ զեկուցումն վիճաբանութիւնները երկարացնելու մասին և կը պնդի, որ նրա վճիռը անյետաձգելի լինի։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 յունվարի։ „Голосъ“ լրագրին Խարկովից հաղորդում են յունվարի 21-ից, որ Մեծ Իշխան Կովկասեան փոխարքան աջողութեամբ շարունակեց իր ճանապարհը դէպի Ս. Պետերբուրգ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յունվարի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 37 կ., երկրորդ 93 ր. 37 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 221 ր., երկրորդ 220 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ր., երկրորդ 92 ր., երրորդ 91 ր. 87 կ., ոսկի 7 ր. 83 կ։ Ռուսաց 1 ր. Լօնդոնի վրա արժէ 25,12 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 214 մարկ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

որ պատրաստել էր այդ բոլորը։ Այնտեղ չարութիւն, նախանձ, ատելութիւն չը կար։ Այնտեղ գայլը գառի հետ միասին էին ապրում։ Եւ ինչ առիթ ունէին կռուելու. ամեն ինչ առատ էր, ամեն տեղ տիրում էր անսահման լիութիւն։ Պէտք, կարիք կոչված բաները այնտեղ չը կային։ Ինչ որ ցանկանում էր մարդ,—աչքի առջևը պատրաստ էր։ Պէտք էր կամենալ միայն, իսկ կատարածը չէր յապաղում։

Մէլիք Ֆրանդիլը իր պատանեկութեան հասակում, դերի ընկած լինելով Պարսկաստանում, երիտասարդութիւնը անցուցել էր Սպահան քաղաքի մէջ։ Այնտեղ մահմետականութիւն ընդունելով, ծանօթացաւ պարսից գրականութեան և լեզուի հետ։ Այդ հանգամանքները իմամին յայտնի չը լինելով, նա բոլորովին զարմացաւ, տեսնելով մի հայ, որ այնպէս գեղեցիկ լեզուով նկարագրում էր իր երազը։ Նա չը կարողացաւ համբերել, ընդհատեց նրա պատմութիւնը, ասելով.

—Երանութիւն եմ տալիս ձեզ, ով երջանիկ մարդ, որ դուք բախտ էք ունեցել տեսնել Մուհամմեդի դրախտը, որ նա պատրաստել է իսլամի արդարների համար։ Դա մի հրաշալի նշան է, որով մարգարէն կոչում է ձեզ իր դիրքը, մասնակից անելու այն բոլոր բարութիւններին, որ ուղղափառները միայն իրաւունք ունեն վայելելու։

—Ես բոլորը չը պատմեցի ձեզ, տէր, պատասխանեց մէլիքը տխուր ձայնով,—լսեցէք, թէ նրանից յետոյ ինչ տեսայ։

Նա շարունակեց.

—Երբ ես հիացած, խորին հոգեմայլութեան մէջ նայում էի այն անհուն վայելչութիւններին, յանկարծ ոգիներից մէկը մօտեցաւ ինձ, ասաց. «Ով մարդ, այստեղ անմաքուրների տեղը չէ, հեռացէք շուտով, այստեղ ապրում են սուրբերը միայն»։ Երբ ես փոքր ինչ յապաղեցայ կատարելու նրա հրամանը, նա բռնեց իմ մօրուքից, և հողաթափի հատ նման ձգեց օդի մէջ։ Նրա բաղկի թափը այնքան սաստիկ էր, որ ես երկար մղվում էի օդի մէջ, թողնելով իմ ներքև լայնատարած ծովեր, ահագին լեռներ և ընդարձակ դաշտեր։ Վերջապէս ես ցած ընկայ մի անապատի մէջ, որ ծածկված էր վայրենի փշերով և ծակոտող տատասկներով։ Ոչինչ այնքան սիրտ ճմլող և տխուր չէր կարող լինել, որպէս այդ աւազոտ անապատը։ Դէպի որ կողմը և նայում էի, կեանքի նշոյլ չը կար։ Ամեն տեղ տիրում էր մեռելային ամայութիւն։ Միայն սև ագռաւները երբեմն խումբերով անցնում էին վերևից և իրանց դառն կռնչիւնով աղմկում էին օդի մահահարաւէր լռութիւնը։ Նրանց ձայնը, կարծես, անէծքի հառաչանքներ լինէր, որ թափվում էր երկնքից, որպէս բօթաբեր աղաղակ։ Իմ սիրտը կտրատվում էր անհամբերութիւնից, չտապում էի անցնել, հեռանալ այդ անապատից։ Բայց նա վերջ և սահման չունէր։ Շուտով սկսեց ինձ պաշարել երկիւղը։ Դէպի որ կողմը գնամ, ինչ անեմ, մտածում էի ես։ Կէսօրվայ ժամն էր։ Արեգակը երկնքից կրակ էր թափում։ Գետինը, որի վրա կանաչ բուսականութեան ոչ մի հետք չը կար, տաքացած էր, ինչպէս շիկացրած երկաթ։ Ամբողջ տարածութիւնը, կարծես, դարերով ջուր չէր տեսած, և պապակվում էր ծարաւից։ Այնտեղ տեսնում էի ես կմախքի նման նիհար մարդիկ, որ թափառում էին անապատի մէջ։ Կարծես, արիւն կոչված բանը չը կար այդ ողորմելի արարածների մէջ։ Կիսամերկ, պատառոտած հագուստով, բոբիկ ոտներով թափառում էին նրանք տատասկների մէջ։ Մարմնացած չքաւորութիւնը, իր բոլոր սոսկալի տառապանքներով, միայն կարող էր նրանց նման լինել։ Մի յաւիտենական անէծքով դատապարտված, այդ խեղճ մարդիկը, բահի և արօրի փոխարէն, իրանց ճանկերով փորում էին կորդացած երկիրը, ցանում էին նրան և ջրում էին իրանց արտասուքով։ Երկինքը անձրև չէր տալիս և ոչ երկիրը բղխեցնում էր աղբիւրներ։ Հողը մերժում էր նրանց ցանքը և իր արգանդի մէջ խեղդում էր ծլած սերմերը։ Իսկ այդ թշուառները դատապարտված էին գործելու, միշտ, անդադար գործելու, թէև առանց վաստակի, առանց արդիւնքի։ Աշխատութեան ծանրութեան մէջ նրանք կատարելապէս անատնացել էին. մարդկային շնորք չէր երևում նրանց մօտ։ Նրանց արևակէզ զաւակները, մրջիմի նման սփռված էին անապատի մէջ, բոյսերի արմատներ էին հանում երկրից և նրանով էին յագեցնում իրանց քաղցը։ Ոչինչ չէր կարող այնքան ողորմելի, այնքան անբախտ լինել, որպէս այդ մերկ մանկտին, որոնց մոխրագոյն դէմքերի վրա ամենևին կեանքի նշոյլ չը կար։ Աւելի թշուառ էր կնիկների դրութիւնը։ Այդ ըստրուկները մի բոպէ հանգստութիւն չունէին։ Աշխատութեան մէջ նրանք այն աստիճան կոչտացել, կոպտացել և վայրենացած էին, որ կորցրել էին բոլորը, ինչ որ կանացի է, ինչ որ քնքոյշ ու գեղեցիկ է։ Մանկահասակը չէր որոշվում պառաւներից, բոլորը մաշվել, թառամել էին վաղահաս ծերութեան մէջ։ Հագուստ չունէին նրանք, իրանց մերկութիւնը ծածկել էին գաղանների մորթիներով։ Կարծես, մի անողորմ ձեռք անգթաբար ճնշում էր, հալածում էր, տրորում էր այդ խղճալի հասարակութիւնը։ Բայց որքան մեծ եղաւ իմ սարսափը, երբ նոյն թշուառ կընիկների թաւում գտայ իմ կնոջը և նոյն անբախտ մանուկների մէջ տեսայ իմ զաւակներին։ «Այստեղ ինչ էք շինում» հարցրի ես։—«Մեզ այստեղ բերեցին»... պատասխանեցին նրանք արտասուքը աչքերում և ընկան իմ գիրկը։ Ես չը կարողացայ երկար հարց ու փորձ անել նրանցից, որովհետև իսկոյն յայտնվեցաւ մի մարդ գազանային դէմքով և մտրակի հարուածներով քշեց նրանց դէպի անապատը, ասելով. «գործեցէք, անպիտաններ»... Ես պատրաստվում էի յարձակվել նրա վրա, բռնել, կտոր-կտոր անել, որ իմ աչքի առջև այնպէս բարբարոսաբար տանջում էր իմ զաւակներին,—բայց յանկարծ զգացի իմ մէջքի վրա մտրակի մի սաստիկ զարկ և լսեցի նրա ըսպառնալի հրամանը. «դէ, դուք էլ»... և նա ձեռքով ցոյց տուեց անապատը։ Ես զարթեցայ, բայց ինձ թւում է, որ հէնց այս բոպէիս զգում եմ մէջքիս վրա նոյն մտրակի դառն ցաւը և դարձեալ լսում եմ նրա սպառնական խօսքերը...

Մէլիքը վերջացրեց. մի քանի վայրկեան վրանի մէջ տիրեց խորին լռութիւն, որը ընդհատվեցաւ իմամի վարդապետական բացատրութիւնով.

—Այդ անապատը ներկայացնում է այն կայարանը, ուր պիտի տարվին «գաւուրների» զաւակները մահից յետոյ։ Այդ դեռ «Ջհաննամի» (գեհենի) նախագաւիթն է, եթէ դուք մի փոքր առաջ գնայիք, պիտի տեսնէիք «մաղէ կամուրջը» և նրա տակից հոսող հրեղէն գետը, որ թափվում է դժոխքի մէջ և այնտեղ ձևացնում է մի լայնատարած ծով։ Հրեղէն ալիքների մէջ դուք կը գտնէիք «գաւուրների» ամբողջ հասարակութիւնը և գուցէ կը ճանաչէիք ձեր աղգակիցներից շատերին, որոնք մարգարէի սուրբ հաւատը թողնելով, հետևեցին մոլորութիւնների, և ժառանգեցին Աստուծոյ բարկութեան հետ նրա յաւիտենական տանջանքը։ Բայց Աստուած չէ կամենում, որ դուք մոլորեալների ճանապարհով գնաք, և այդ երազը մի նշան է, որով Նա հրաւիրում է ձեզ դէպի ուղիղ ճանապարհը, որ տանում է դէպի արդարների յաւիտենական երանութիւնը, որին արժանացաք աչքով տեսնել ձեր երազի սկզբում։

de Napoleon III» վերնագրով մի հաւաքածու։ Նապոլէօնը իր ամբողջ թագաւորութեան ժամանակ սովորութիւն է ունեցել ամեն անցքերի մասին նկատողութիւններ գրել և երբ, սեպտեմբերի 4-ին հարկադրվեցաւ Տիւլերեան պալատից փախչել, կարողացել են և այդ թղթերը փրկել։ Ասում են, թէ այդ հաւաքածուի մէջ շատ տեղեկութիւններ կան, որոնք այժմեան հանրապետութեան մէջ գործող յայտնի անձինքների վատ կողմերն են մերկացնում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 21 յունվարի։ Համայնքների ժողովի սպիկերը (նախագահը) յայտնեց, որ այսօր նա չէ կարող թոյլ տալ վիճաբանութիւնների շարունակելը։ Այդ յայտնութիւնը մեծ վրդովմունք գործեց։ Այնու հետև ժողովը ընդունեց Ֆօրստերի առաջարկութեան քննութիւնը և իսկոյն սկսեց առաջին ընթերցանութիւնը։ Հօմրուլերներից և ավտոնոմիստներից շատերը թողին ժողովի դահլիճը։ Գլադստոն ասաց, որ էգուց կը յայտնէ զեկուցումն վիճաբանութիւնները երկարացնելու մասին և կը պնդի, որ նրա վճիռը անյետաձգելի լինի։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 յունվարի։ „Голосъ“ լրագրին Խարկովից հաղորդում են յունվարի 21-ից, որ Մեծ Իշխան Կովկասեան փոխարքան աջողութեամբ շարունակեց իր ճանապարհը դէպի Ս. Պետերբուրգ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յունվարի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 37 կ., երկրորդ 93 ր. 37 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 221 ր., երկրորդ 220 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ր., երկրորդ 92 ր., երրորդ 91 ր. 87 կ., ոսկի 7 ր. 83 կ։ Ռուսաց 1 ր. Լօնդոնի վրա արժէ 25,12 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 214 մարկ։

—Ես մի մեղաւոր մարդ եմ... պատասխանեց մէլիքը ցաւալի ձայնով,—ես զգում եմ իմ բոլոր մեղքերը...

—Մեր օրէնքով, ասաց իմամը լուրջ կերպով,—եթէ «գաւուրներից» մէկը կընդունէ մուսուլմանների կրօնը, ոչ թէ նրանից, այլ և նրա զաւակներից մինչև եօթն սերունդ մեղք չի պահանջվի։ Նրանք կը վայելեն ամենապատուական տեղը Մուհամմէդի դրախտի մէջ։

Մէլիքի դէմքի վրա վաղեց ուրախութեան նրման մի բան, և մօտենալով իմամին, ձեռքը մեկնեց, բռնեց նրա ձիւնի նման սպիտակ հագուստի փէշից, և համբուրելով ասաց.

—Ձեզանից է կախված իմ փրկութիւնը, տէր, մի թողէք ողորմելոյս կորչիլ։

—Ձեր փրկութիւնը խիստ դիւրին է, պատասխանեց իմամը նոյնպէս ուրախանալով,—առ այժմ բաւական է միայն, որ դուք կարդաք «վկայութեան հանգանակը» *) և ընդունէք իսլամը, իսկ վաղը մենք կը կատարենք թլփատութեան խորհուրդը։

—Ես պատրաստ եմ։

Իմամը սկսեց նրան բառ առ բառ թելադրել «վկայութեան հանգանակի» արաբական խօսքերը և մէլիքը դպրոցական աշակերտի նման կրկնում էր։ Երբ վերջացաւ, իմամը գրկեց նրան, և համբուրելով ասաց.

—Այժմ դուք իմ աչքի լոյսը և իմ եղբայրն էք և կարող էք նստել իմ մօտ, իմ օթոցի վրա։

Պիղծ «գաւուրը» մի քանի արաբական բառեր արտասանելով, դարձաւ մաքուր, անարատ մուսլիման։ Այժմ իմամը ոչ միայն տալիս էր նրան իր չիբուխից ծխել, այլ պահեց իր մօտ, միասին ընթրիք վայելեցին, և գիշերը մնաց իմամի վրանում, պառկելով նրա հանդերձատնից բերված մաքուր անկողնի մէջ, որին ոչ մի «գաւուրի» ձեռք չէր դիպել։ Այդ բոլոր գործողութիւնների ժամանակ դերվիշը լուռ էր և մի առանձին արհամարհանքով նայում էր հայ մէլիքի վրա, դժուարանալով հաւատալ նրա անկեղծութեանը։ Մէլիքին ճանաչում էր նա. տեսել էր նրան Պարսկաստանի մի հեռաւոր քաղաքում... և գիտէր նրա բոլոր գաղտնիքները...

(Կը շարունակուի)

*) Քալմէյի շահադաթ։